# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 12

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի

ռեկտորատի 28.02. 2020թ. նիստի

Ռեկտորատի նիստը կայացավ ք. Գյումրի, Պ. Սևակ 4 հասցեում:

Նիստին ներկա էին ռեկտորատի 16 (տասնվեց) անդամից 13-ը (տասներեք):

Նիստին մասնակցում էին՝

1. Ե. Սերոբյան՝ ռեկտորի ԺՊ
2. Կ. Պետրոսյան՝ ռեկտորատի քարտուղար, գիտական քարտուղար
3. Ն.Ավետիսյան՝ ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի պրոռեկտոր-տնօրենի ՊԿ
4. Գ. Նիկողոսյան՝ պրոռեկտոր-աշխատակազմի ղեկավարի ԺՊ
5. Ս. Շահպարոնյան՝ ռեկտորի խորհրդական
6. Ռ. Քալաջյան՝ ֆինանսատնտեսական վերլուծությունների, ծրագրավորման և հաշվապահական հաշվառման բաժնի վարիչ-գլխավոր հաշվապահ
7. Հ. Մելքոնյան՝ արտաքին համագործակցության և հասարակայնության հետ կապերի կենտրոնի տնօրեն
8. Թ. Խաչատրյան՝ գրադարան - ուսումնագիտական խորհրդատվությունների, նորարարությունների և ՏՏ կենտրոնի տնօրեն
9. Բ. Պողոսյան՝ բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի դեկան
10. Թ. Մելիքյան՝ հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի դեկան
11. Ռ. Մարդոյան՝ մանկավարժության ֆակուլտետի դեկան
12. Օ. Հովհաննիսյան՝ սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի դեկան
13. Ս. Հովհաննիսյան՝ անձնակազմի կառավարման և իրավական ապահովման բաժնի պետ

ՕՐԱԿԱՐԳ

1. «Շիրակի Մ. Նալբանդյանի անվ. պետական համալսարան» հիմնադրամի մանկավարժության ֆակուլտետի ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ բաժնի ու ռազմական ամբիոնի ուսանողների դիմումների քննարկման մասին

Զեկ.՝ ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի պրոռեկտոր-տնօրենի ՊԿ Ն. Ավետիսյան

2. Ընթացիկ հարցեր

ԼՍԵՑԻՆ՝

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվ. պետական համալսարան» հիմնադրամի մանկավարժության ֆակուլտետի ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ բաժնի ու ռազմական ամբիոնի ուսանողների դիմումների քննարկման մասին

Տիկին Ավետիսյանը ներկայացրեց, որ ռեկտորի ԺՊ-ի անունով ստացվել են դիմումներ՝ համապատասխան փաստաթղթերով կցված:

Դիմել է ռազմական ամբիոնի բակալավրի կրթական ծրագրով հեռակա ուսուցման համահարգի V կուրսի ուսանող Սամվել Սողոմոնի Մելքոնյանը առ այն, որ նա պայմանագրային զինծառայող է, ս/թ-ի 03.02-21.02 ժամանակահատվածում նախատեսված պրակտիկայից բացակայել է մարտական հերթապահություն իրականացնելու պատճառով և խնդրում է բացակայությունները համարել հարգելի՝ թույլատրելով լրացնել բացակա օրերը:

Հաջորդ դիմումատուները մանկավարժության ֆակուլտետի առկա ուսուցման համահարգի ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ բաժնի I, II և III կուրսի ուսանողներ համապատասխանաբար Մանվել Խնձրցյանը, Հայկ Ստեփանյանն ու Արման Բաղդասարյանն են, որոնք դիմումներում նշում են, որ լուծարային շրջանում Մանվել Խնձրցյանը և Արման Բաղդասարյանը գտնվել են ուսումնամարզական հավաքների, իսկ Հայկ Ստեփանյանը ստացիոնար բուժման մեջ լինելու պատճառով չեն կարողացել մասնակցել քննություններին և խնդրում են թույլատրել քննություններն հանձնելու լուծարային շրջանի ավարտից հետո:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Եր. Սերոբյանը. Ռ. Մարդոյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Ռազմական ամբիոնի բակալավրի կրթական ծրագրով հեռակա ուսուցման համահարգի V կուրսի ուսանող Սամվել Սողոմոնի Մելքոնյանին թույլատրել պրակտիկան իրականացնելու անհատական ժամանակացույցով՝ ս/թ-ի 20.03-01.04 ժամանակահատվածում:

2. Նկատի ունենալով ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ բաժնի առաջատար մարզիկներ Մանվել Խնձրցյանի, Արման Բաղդասարյանի դիմումներին կցված փաստաթղթերում նշված մարզահավաքներին մասնակցելու և Հայկ Ստեփանյանի ստացիոնար բուժում ստանալու հանգամանքները, ինչպես նաև համապատասխան փաստաթղթային հիմքերի առկայությունը՝ թույլատրել

լուծարային շրջանն իրականացնելու  անհատական ժամանակացույցով՝ ս/թ-ի 28.02-5.03 ժամանակահատվածում:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝
13 անդամ. կողմ՝ 13, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Ռեկտորատի նախագահ՝ ռեկտորի ԺՊ — Ե. Սերոբյան

Ռեկտորատի քարտուղար, գիտական քարտուղար՝ — Կ. Պետրոսյան

Պրոռեկտոր-աշխատակազմի ղեկավարի ԺՊ — Գ. Նիկողոսյան

ՈՒսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի պրոռեկտոր-տնօրենի ՊԿ — Ն. Ավետիսյան

Ռեկտորի խորհրդական՝ — Ս. Շահպարոնյան

Ֆինանսատնտեսական վերլուծությունների, ծրագրավորման և հաշվապահական հաշվ. բաժնի վարիչ-գլխավոր հաշվապահ՝ — Ռ. Քալաշյան

Արհեստակցական կազմակերպության նախագահ՝ — Վ. Խաչատրյան

Գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրեն՝ — Ա. Սարգսյան

Արտաքին համագործակցության և հասարակայնության հետ կապերի կենտրոնի տնօրեն՝ — Հ. Մելքոնյան

Գրադարան-ուսումնագիտական խորհրդատվությունների, նորարարությունների և ՏՏ կենտրոնի տնօրեն՝ — Թ. Խաչատրյան

Բնագիտամաթեմատիկական

ֆակուլտետի դեկանի Բ. Պողոսյան

Հումանիտար գիտությունների և

արվեստի ֆակուլտետի դեկան՝ Թ. Մելիքյան

Մանկավարժության ֆակուլտետի

դեկան՝ Ռ. Մարդոյան

Սոցիալական գիտությունների և

իրավունքի ֆակուլտետի դեկան՝ Օ. Հովհաննիսյան

Ռազմական ամբիոնի պետ՝ Ա. Մկրտչյան

Անձն.կառ.և իրավ.ապահովման

բաժնի պետ՝ Ա. Հովհաննիսյան